ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Պատվիրատուն՝ ՀՀ մշակույթի նախարարությունը, ստորև ներկայացնում է իր կարիքների համար գրականության հրատարակման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված **ՀՀՄՆ-ՄԱԱՇՁԲ-18/78** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում **2018 թվականի հոկտեմբերի 5-ին** կնքված N **«ՀՀՄՆ-ՄԱԱՇՁԲ-18/78»** ծածկագրով պայմանագրում **2018 թվականի դեկտեմբերի 14-ին** կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունները պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1: Հեղինակների խումբ «Հայկական գունապնակ. Երևան-2800» գրքի հրատարակման աշխատանքների մինչտպագրական ծախսերն իրականացնելու համար Կատարողի կողմից առաջարկվել է տրամադրել կանխավճար՝ պայմանագրի գնի 100 %-ի չափով:

Փոփոխության առաջացման պատճառ N 2: Կատարողի կողմից առաջարկվել է երկարաձգել պայմանագրով նախատեսված հրատարակման աշխատանքների կատարման ժամկետը:

Փոփոխության նկարագրություն N 1: Պայմանագրով կանխավճարի տրամադրման նախատեսում պայմանագրի գնի 100%-ի չափով:

Փոփոխության նկարագրություն N 2: Պայմանագրով կանխավճարի տրամադրման նախատեսում պայմանագրի գնի 100%-ի չափով:

Փոփոխության նկարագրություն N 2: Պայմանագրի թիվ 1 «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» հավելվածով նախատեսված աշխատանքների աշխատանքների կատարման ժամկետի երկարաձգում մինչև 2019 թ-ի հունվարի 14-ը:

Փոփոխության հիմնավորում N 1: ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 6-րդ ենթակետ:

Փոփոխության հիմնավորում N 2: ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 4-րդ ենթակետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ն. Կարապետյանին:

Հեռախոս՝ 011 58-51-78:

Էլ. փոստ՝ cultproject@mail.ru:

Պատվիրատու՝ ՀՀ մշակույթի նախարարություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ՀՀՄՆ-ՄԱԱՇՁԲ-18/78» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «14» 12 2018 թ.

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը, ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող գլխավոր քարտուղար Ս. Մուրադյանի, մի կողմից, և «Արտասահմանյան երկրների հետ մշակութային համագործակցության հայկական հասարակական կազմակերպությունը» ի դեմս կազմակերպության կանոնադրության հիման վրա գործող պատասխանատու քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար՝ Ի. Շահնազարյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1. Հիմք ընդունելով կողմերի միջև 2018 թվականի հոկտեմբերի 5-ին կնքված հրատարակման աշխատանքների կատարման պետական գնման N «ՀՀՄՆ-ՄԱԱՇՁԲ-18/78» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.6 կետերը և առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 4-րդ և 6-րդ ենթակետերով՝ Պատվիրատուն և Կատարողը համաձայնության են եկել Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1.1 Պայմանագրի 4.1.1 կետում «**Պայմանագրի գնի 60 %-ը՝ 720 000 (յոթ հարյուր քսան հազար) ՀՀ դրամը**» բառերը փոխարինել «**Պայմանագրի գնի 100 %-ը՝ 1 200 000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամը**» բառերով:

1.1.2 Պայմանագրի թիվ 1 «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» հավելվածով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետի ավարտը՝ **«15.12.2018 թ.»** բառերը փոխարինել **«14.01.2019 թ.»** բառերով:

2. Համաձայնագրի գործողության ժամկետը

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև Պայմանագրով սահմանված երկու Կողմերի պարտավորությունները լրիվ ծավալով ու պատշաճ կատարելու ավարտի ժամկետը:

2.2. Կողմերի միջև ձեռք բերված՝ սույն համաձայնագրին հակասող բոլոր նախկին պայմանավորվածությունները դադարում են գործել սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությանը համապատասխան:

3.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 (երկու) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ մշակույթի նախարարություն Հասցեն՝ 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան փող.3 Կառավարական տուն 2, հեռ.՝, 010 58-51-78, 011 585178 ՀՎՀՀ 02508054, հ/հ 900011012862 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում	«Արտասահմանյան երկրների հետ մշակութային համագործակցության հայկական հասարակական կազմակերպություն» Հասցեն՝ ք. Երևան, 0002,Արամի 82-84 հեռ.՝ 055-46-24-57 ՀՎՀՀ 02504122, հ/հ 220483350074000 «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
---------- Ս. Մուրադյան (ստորագրություն) Կ.Տ.	---------- Ի. Շահնազարյան (ստորագրություն) Կ.Տ